ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՈՒԴԻՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ Ո ՄԱ-ԾՁԲ-ԱՈՒԴԻՏ/2022

ք. Երևան «03» 08 **2022թ.**

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Ա. Ֆիդանյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՀԷՔՍ ՍԻՍԹԵՄՍ»> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ. Աֆրիկյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **համակարգչային աուդիտի ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է **997 000** (ինը հարյուր իննսունյոթ հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի

կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ոստիկանություն	**«ՀԷՔՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ**
ք. Երևան, Նալբանդյան 130	**Իրավ. ք.Երևան, Միկոյան 7/24. 0090**
ՀՀ Ֆինանսների նախարարության	**Գործ. ք.Երևան, Ալեք Մանուկյան 9, 208 սենյակ**
աշխատակազմի գործառնական վարչություն	**«Ամերիաբանկ» ՓԲԸ**
Հ/Հ 900011021947	**Հ/Հ 1570018851260100**
ՀՎՀՀ 01533334	**ՀՎՀՀ 00886967**
հեռ. 59-60-21	**Հեռ. /060/61 00 04**
Էլ. փոստ: police_gnumner@police.am	**Էլ. փոստ: tigran@hex.systems**
Ա. Ֆիդանյան	**Տ. Աֆրիկյան**
/ոստիկանության պետի տեղակալ/	**/տնօրեն/**
(ստորագրություն)	**(ստորագրություն)**
Կ.Տ	**Կ.Տ**

Հավելված 1
<<03>> << 08 >> 2022թ կնքված
N ՀՀ Ո ՄԱ-ԾՁԲ-ԱՈՒԴԻՏ/2022 գնման պայմանագրի

Տեխնիկական բնութագիր – Գնման ժամանակացույց

գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
					հասցեն	Ժամկետը
72811100/1	**Համակարգչային տեխնիկայի աուդիտի ծառայություններ** Նպատակը՝ ՀՀ Ոստիկանության հաշվեկշռում առկա տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի սպասարկումը և կառավարումը իրականացվել է «Սեքյուրիթի Դրիմս» ՍՊ ընկերության կողմից, որը ՀՀ կառավարության 14 հուլիսի 2022 թվականի թիվ- որոշմամբ այսուհետ պետք է իրականացնի «Ոստիկանության տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից: ՀՀ Ոստիկանության հաշվեկշռում առկա տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի փոխանցումը «Ոստիկանության տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը իրականցնելու համար անհրաժեշտ է	դրամ	997.000	1	Նալբանդյան փ. 130	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո:

	իրականացնել նշված համակարգերի տեխնիկական ստուգում տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի սարքավորումների, ծրագրերի, ցանցի, կապուղիների ենթակառուցվածքների և գույքի տեղակայման համադրման (հիմք ընդունելով տեղակայման ակտերը) մասով: Ծառայությունները իրականացնող պետք է ուսումնասիրի և ստուգի՝ 1. SS միջավայրի ռիսկի գնահատում • SS կազմակերպական կառուցվածքը • SS քաղաքականությունը և ընթացակարգերը • SS ստանդարտները և փաստաթղթերը • հարցազրույց համապատասխան անձնակազմի հետ • SS ռիսկերի կառավարման ռազմավարության գնահատում՝ գնահատվում է ռիսկերը մեղմելու համար ձեռնարկված գործողությունները և գործընթացի շրջանակներում հաշվետվողականության մակարդակը: 2. Առկա SS Ցանցի կառուցվածք և նախագիծ • Տվյալների կիրառման տեխնոլոգիայի և կազմակերպման այլընտրանքային ռազմավարությունների գնահատում • Ստուգել SS նպատակների և հեռանկարային ու կարճաժամկետ պլանների առկայությունը • SS ցանցի նախագծման ստուգում - սերվերների ՕՀ կազմաձևման ստուգում - Պահուստային սերվերների կազմաձևման ստուգում - Տվյալների բազաների կազմաձևման և պահուստավորման գործընթացների ստուգում - Վիրտուալ միջավայրի կազմաձևման ստուգում - SS ծառայությունների փորձարկում և արտադրական միջավայրի ստուգում - Նոր համակարգերի ներդրման գործընթացի ստուգում - Ապահովել միջոցներ, որ հետևողականորեն կիրառվի նախագծված հսկողությունը, և որ գործառնական թերություններ չլինեն - Ներքին/արտաքին վեբ ծառայությունների/հավելվածների կոնֆիգուրացիայի ստուգում 3. Առկա Տեղեկատվական անվտանգության կառավարման մշակման ստուգում • սերվերային և այլ կոմպոնենտների ներառյալ Օպերացիոն Համակարգերի անվտանգության կազմաձևման ստուգումներ • ներքին ցանցերի անվտանգության նախագծման ստուգում • Աղետների վերականգնման պլանավորման իրականացման ստուգում • Տեղեկատվական անվտանգության ծրագիրը, ներառյալ					

	ռազմավարության, տեղեկացվածության, վերապատրաստամն և հաշվետվությունների գնահատական • Բացահայտել ներքին համակարգերի ցանցի թույլ կողմերը և ստեղծել գործողությունների պլան, որի նպատակն է կանխել տեխնոլոգիայի անվտանգության խախտումները 4. Առկա գույքի գույքագրում/ծրագրային համադրում ըստ գույքի առկա տեղակայման ակտերի - հաշվեկշում առկա գույքի ուսումնասիրություն, ցուցակագրում - հաշվեկշում առկա գույքի նույնականացում ակտիվ սարքավորումների ցանկի հետ - հաշվեկշում առկա գույքի մակ հասցեների ցուցակագրում - հաշվեկշում առկա գույքի համադրում ըստ առկա տեղակայման ակտերի 5. Առկա ծրագրային համակարգերի ստուգում, որը կներառի - ներդրված միջավայրերի վելուծություն - օգտագործվածծրագրային մոդուլների տեխնոլոգիաների համափարփակ վերլուծություն - այլ համակարգերի հետ ինտեգրացիաների վերլուծություն - կոմերցիոն ծրագրային բաղադրիչներիառկայության դեպքում, դրանց լիցենզիաների առկայության և դրանց վավերականության ստուգում 6. Առկա ենթակառուցվածքների և կապուղիների ստուգում, ինչը կներառի ընդհանուր քանակական ցուցանիշներ օնլայն վիճակում գտնվող հետյալ սարքերի՝ - սերվերներ - անխափան սնուցման սարքեր - տվյալների պահպանման համակարգ - կենտրոնական երթուղիչներ - տեսախցիկներ - փողոցներում տեղադրված արկղերի սարքավորումներ՝ սվիչ, ձայնագրող սարք /NVR/ և այլն - արագաչափեր - պահուստային էլ. սնուցում ապահովող սարքավորումներ 7. Խորհրդատվություն և հաշվետվություն •Տրամադրել հաշվետվություններ, որոնք պետք է ընդգրկեն ստուգման դիտարկումների, եզրակացությունների և առաջարկությունների վավերականությունը հաստատող ապացույց-փաստաթղթեր. •Տրամադրել հստակ կառուցվածքով նկարագրված առաջարկություններ					

	բացահայտված խնդիրների լուծման համար - SS ենթակառուցվածքի անվտանգության համակարգերի և միջոցառումների պլանի ներդնման առաջարկություն Պահանջներ՝ Վեր նշված աշխատանքները Մատակարարի կողմից պետք է կատարվեն առավելագույնը 3 ամսվա ընթացքում:					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011021947
ՀՎՀՀ 01533334
հեռ. 59-60-21
էլ. փոստ: police_gnumner@police.am

Ա. Ֆիդանյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՀԷՔՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ
Իրավ. ք.Երևան, Միկոյան 7/24. 0090
Գործ. ք.Երևան, Ալեք Մանուկյան 9, 208 սենյակ
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570018851260100
ՀՎՀՀ 00886967
Հեռ. /060/61 00 04
էլ. փոստ: tigran@hex.systems

Տ. Աֆրիկյան
/ տնօրեն/
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 2
«03» «08» 2022թ կնքված
N ՀՀ Ո ՄԱ-ԾՁԲ-ԱՈՒԴԻՏ/2022 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

վերով ատես ած աբաժ ի արը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
	CPV-72811100/1	**համակարգչային աուդիտի ծառայություններ**								997 000	997 000	997 000	997 000	997 000	**997 000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011021947
ՀՎՀՀ 01533334
հեռ. 59-60-21
Էլ. փոստ: police.gnumner@police.am

Ա. Ֆիրդանյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ՀԷՔՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ
Իրավ. ք.Երևան, Միկոյան 7/24. 0090
Գործ. ք.Երևան, Ալեք Մանուկյան 9, 208 սենյակ
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570018851260100
ՀՎՀՀ 00886967
Հեռ. /060/61 00 04
Էլ. փոստ: tigran@hex.systems

Տ. Աֆրիկյան
/ տնօրեն/
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված3
ՀՀֆինանսներինախարարի
2017 թվականիհուլիսի 18-ի
N 356-Նիրամանի

«Հավելված
ՀՀֆինանսներինախարարի
2017 թվականիմայիսի 20-ի
N 230-Նիրամանի

Պայմանագրիկողմ

_____

_____

գտնվելուվայրը _____

հհ _____

հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելուվայրը _____

հհ_____

հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻԿԱՏԱՐՄԱՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրիհամարը՝ _____

ՊատվիրատունևՊայմանագրիկողմը՝հիմքընդունելովպայմանագրիկատարմանվերաբերյալ « » « » 20 թ. դուրսգրված N _____հաշիվապրանքագիրը, կազմեցինսույնարձանագրությունը հետևյալիմասին.

ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրիկողմըկատարելէհետևյալաշխատանքները, կամմատուցելէհետևյալծառայությունները, կամմատակարարելէհետևյալապրանքները՝

N	Մատակարարվածապրանքների, կատարվածաշխատանքների, մատուցվածծառայությունների							
	անվա-նումը	տեխնի-կականբնութագրիհամառոտշարա-դրանքը	քանակականցուցանիշը		կատարմանժամկետը		Վճարմանենթակագումարը /հազարդրամ/	Վճարմանժամկետը /ըստվճարմանժամանա-կացույցի/
			ըստպայմանագրովհաստատվածգնմանժամանա-կացույցի	փաս-տաց ի	ըստպայմանագրովհաստատվածգնմանժամանա-կացույցի	փաս-տաց ի		

Սույնարձանագրություններկկողմհաստատմանհամարհիմքհանդիսացածհաշիվապրանքագիրըևդրականեզրակացությունըհանդիսանումենսույնարձանագրությանբաղկացուցիչմասըևկցվումեն:

Ծառայությունը հանձնեց

_____

ստորագրություն

_____

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունը ընդունեց

_____

ստորագրություն

_____

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2022թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է,որ_____-ի(այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող)միջև 20 թ. _____ -ին կնքված N_____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն